

ԲԵԿՈՐՆԵՐ ՀԱԿՈՒ ՊԱՐՈՆՅԱՆԻ ԿՅԱՆՔԻՑ

Ա. Ա. ՄԱԿԱՐՅԱՆ

*Ժամանակը ազնիվ թեև մըն է
որ անով մեր կյանքը կը հյուսվի:
Հ Պարոնյան*

Հակոբ Պարոնյանի գիտական կենսագրության բացակայությունը պարոնյանագիտության ցավալի բացթողմունքներից է: Հանճարեղ երգիծաբանը դժբախտ եղավ ապրած կյանքի ողջ ընթացքում, անգամ՝ մահվանից հետո: Խառը հանգամանքներում կորավ նրա անձնական արխիվը, կորավ նույնիսկ շիրիմը, քաղաքական անբարենպաստ պայմաններում ձախողվեց նաև երգիծաբանի ժամանակակցի՝ Հր. Ասատուրի մտադրությունը՝ գրելու ընդարձակ աշխատություն նրա կյանքի ու ստեղծագործության մասին (Հր. Ասատուրիմ հաջողվեց հրատարակել ընդամենը չորս փոքր հատված այդ աշխատությունից):

Պարոնյանը վախճանվեց 1891 թ. մայիսի 27-ին: Պոլսահայ գաղթօջախն անմիջապես զգաց հանճարի կորստյան սարսափը... Հայ մամուլը հազիվ էր հասցրել նկարագրել նրա կյանքի վերջին պահերն ու հուղարկավորությունը, երբ մեկ շաբաթ հետո՝ հունիսի 3-ին, վախճանվեց մի ուրիշ հանճար՝ Պետրոս Ադամյանը: Վերջինիս մահը մի տևական շրջան լռության մատնեց Պարոնյանի անունը: Ժամանակի արևմտահայ նշանավոր օրաթերթը՝ «Արևելքը», ամիսներ շարունակ մի առանձին եռանդով ծավալուն հոդվածներ, հուշեր, ուսումնասիրություններ, արձակ ու չափածո ողբեր և ներբողներ տպագրեց Ադամյանի մասին, իսկ Պարոնյանի մասին՝ և ոչ մի տող: «Մահն իսկ անբախտության առիթ մը եղավ Պարոնյանի համար: ...Բեմի այս հսկային վախճանը թանձր ու համատարած սովերի մը պես իջավ այն մյուս հսկային, երգիծանքի վարպետին հիշատակի վրա և բողոքվին մոռուց, կարծես երկրորդ անգամ մըն ալ մեռուց զայն», - կես դար հետո այսպես ցավով պիտի նկատեր Փարիզի «Արևմուտք» շաբաթաթերթը՝ երկու հանճարներից մեկին շռայլված և մյուսին զլացված մեծարանքի տուրքի առիթով:

Բայց, այնուամենայնիվ, ժամանակի և հետագա շրջանի մամուլի էջերում, տպագիր ալ աղբյուրներում ու արխիվային նյութերում ցրված են ուշագրավ հուշեր, թանկագին բեկորներ, որոնք պատմում են Պարոնյանի կյանքի որոշ դրվագների, գործունեության, բնավորության, սովորությունների, կենցաղի մասին՝ աստիճանաբար ուրվագծելով նրա կյանքի մեզ անծանոթ էջերը...

1891 թ. մահվան մահճում գտնվող երգիծաբանն իր մտերիմներից Հովհ. Սեֆյանին ատմ է. «Այլևս պետք է որ երթանք. ուժասպառ կ'զգամ զիս: Զավակներս, է՛հ ազգին համար քիչ մը բան եթե ըրի, զավակներս թերևս կը հոգան»¹: Սա մահամերձի վերջին հույսն էր, թերևս՝ նաև սփոփանքը: Բայց, ցավոք, նրա զավակներն ու այրին այդպես էլ չկարողացան հոգալ հանճարի թողած գրական հարուստ ժառանգությունը:

Պարոնյանն ամուսնացել է 36 տարեկան հասակում՝ 1879 թ. փետրվարին²: Դրանից

¹ «Արևմուտք», Փարիզ, 1945, թիվ 37:

² «Արձագանք», Թիֆլիս, 1891, թիվ 15:

³ Հ Պարոնյանի անուսնության տարեթվի ստուգությունը հայտնի է դառնում նրա քրոջ՝ Նոյնաբեթի որդու՝ Մաքսուտ Սանտալյանի մի նամակից՝ փակագրված Ա. Պոլիս, 3/15 նոյեմբեր 1891 թ., և ուղղված Հր. Ասատուրին «Իրավ է, որ 1879 փետր.ին ամուսնացած է նա: Յուր քույրերն քսին ինձ. «Հատաբիկա փետր.ին ճիշտ 13 տարի պիտի ըլլա Հակոբյանին ամուսնութենն ի վեր, հաշվե »: Ուրեմն ճիշտ է»: Գ.Ա.Թ. Հ. Պարոնյանի ֆունդ:

մեկ տարի առաջ՝ 1878-ին, երգիծաբանը, խանդավառված ռուս-թուրքական պատերազմում ռուսների տարած փայլուն հաղթանակով, վերադարձել էր իր ծննդավայրը՝ Ադրիանապոլիս (Էստիրնե): Վերջացել էր պատերազմը, սակայն 1878 թ. հունիսին գումարվում է Բեռլինի տխրահռչակ վեհաժողովը, և Պարոնյանը, քաշված Հր. Ասատուրի ազգականներից մեկի գրասենյակում, ուր ծառայության էր մտել, իր սրատես հայացքով հետևում էր օրվա դեպքերին՝ որևէ լավ բան արդեն չակնկալելով հայոց համար... Քիչ անց նա վերստին Պոլիս է գալիս, հաստատվում Միջագյուղում (Օրթագյուղ)՝ Էթնեքյանների ընտանեկան հարկի տակ, ուր բնակվել էր 1873 թվականից: Անցած ու այդ օրերի մասին թանկագին հուշ է թողել Տիգրան Արփիարյանը՝ «Պարոնյանի ամուսնությունը» խորագրով:

Տ. Արփիարյանը եղել է Էթնեքյանների հարևանը, մտերիմ՝ նրանց «ծաղկի պես նորափթիթ ու թռչունի պես ոստոստուն» դստեր՝ Սաթենիկի, նրա քրոջ և երկու եղբայրների հետ: «Երկու քույրերեն փոքրիկը՝ Սաթենիկ,- պատմում է հուշագիրը,- զվարթ ցնծուն աղջիկ մըն էր, կապույտ գեղեցիկ աչքերով, մուգ խարտյաշ մազերով, որուն ներկայությունը միայն ուրախություն կը պատճառեր մեր մանկական խումբին... Իր անունը Սաթենի վերածած էինք, և երբեմն, խաղերու ոգևորյալ վայրկյաններուն, ավելի կրճատելով Սաթ կը կոչեինք»⁴: Տ. Արփիարյանն այնուհետև պատմում է, որ մի օր երկու վարձվորներ են գալիս ու բնակվում Սաթենիկենց տան վերնահարկում. մեկը կատակերգակ դերասան Թրյանցն էր, մյուսը՝ Պարոնյանը. «Էստիրնեցին» , ինչպես կը կոչեին զինքը թաղին մեջ, շատ յուրջ դեմք մը ուներ, յուրջ խոսված մը. և սակայն տեսակ մը իրարանցում առաջ բերած էր ընտանեկան շրջանակներուն մեջ. կինը կը փսփսային իրարու թե «շարիվարի կը գրե» ու կը զգուշանային իրմե: Շատ կը կարդար ու քիչ կը գրեր: Սովորաբար Մոլիեռի կամ Պուալոյի հատոր մը ուներ ձեռքը, պատուհանին քով ուր կ'առանձնանար իրիկունները: Պարոնյանն էր:

Երկու երեք տարի անցան այսպես: Տակավ առ տակավ միտքս կրթվելով ու գաղափարներս զարգանալով, կը սկսեի ըմբռնել թե հարգի բան մըն էր «Մեղու»ի խմբագրին դրացնությունը. իրմե կ'առնեի իր լրագիրը գոր կը կարդայի անհագաբար. ու մտովի կը սքանչանայի այս պարզ, համեստ մարդուն վրա որ այնքան սիրուն բաներ կը գրեր. չէի կըրնար ըմբռնել թե ինչպես, իր սենեկին անկյունեն, այնքա՛ն բան կ'իմանար և կ'ուսումնասիրեր»⁵:

Տարիներ են անցնում, հասակ է նետում Տ. Արփիարյանը և հպարտանում «Մեղվի» խիզախ ու անկյուն խմբագրի դրացնությամբ: Տարիների հետ փոխվում է նաև գեղեցկուհի Սաթենը. «Մելամաղձոտ սովեր մը եկեր խառնվեր էր իր ժպիտին ու երազուն բան մը իր նայվածքին»: Եվ շատ չանցած՝ նրան ամուսնության առաջարկություն է անում երգիծաբանը: Կապուտաշյա բարեպաշտ ու առաքինի աղջիկը ջերմացնում է երգիծանքի վարպետի հոգնաբեկ սիրտը. «Այդ ծաղկատի աղջկան անդրանիկ համակրանքն, անդրանիկ սերն՝ իր արձագանքը կը գտներ «Մեղու»ի խմբագրին սրտին մեջ, որ՝ հանրության համար հեզնող ու սկեպտիկ, իր ներքին կյանքին մեջ կը զգար երիտասարդական խանդավառում ու պաշտում. սերը՝ Պարոնյանի գրչին տակ այնքան ծաղրված, կուզար վերջապես իր սիրտն ալ տիրել»⁶:

Պարոնյանը եղել է բարի ամուսին և հոգատար հայր: «Բարի ամուսին մըն էր, որ կը գուրգուրար իր կնոջն ու փոքրիկ Աշոտին վրա: Տիկին Սաթենիկ, քիչ մը նիհարցած, մանկամարդ ու գորովայից մոր մը կերպարանքին տակ կը հիշեցուներ ինձ փոքրիկ Սաթենը, տղայության ընկերուհիս»⁷, - տարիների հեռվից հիշում է Տ. Արփիարյանը: Իսկ ահա ինչ է գրում Պարոնյանի քրոջ որդին՝ Մաքսուտ Սանտալճյանը. «Յուր ընտանյաց և բարեկամաց համար ամեն գոհողության հանձնառու, պատրաստ՝ իր շապիկը փոխ տալու խնդրողին, համեցանյի կը մոռնար յուր անձը»⁸:

Նյութական գրկանքներն ուղեկցել ու հալածել են երգիծաբանին ողջ կյանքի ընթացքում: Եվ նա ստիպված է եղել խմբագրական գործունեությանը զուգընթաց գրադվել նաև հաշվապահի հոգնամաշ աշխատանքով՝ գրեթե միշտ ատելով մաթեմատիկան: Դա է եղել

⁴ «Մասիս», Կ. Պոլիս, 1893, թիվ 3973:

⁵ Նույն տեղում:

⁶ Նույն տեղում:

⁷ Նույն տեղում:

⁸ «Ծաղիկ», Կ. Պոլիս, 1891, թիվ 40:

հայ մտավորականի ճակատագիրը (հայ գրականության մեջ նա միակը չէ): Այդ հանգամանքն ընդգծել են շատերը, այդ թվում՝ և՛ Հր. Ասատուրը, և՛ Պարոնյանի որդին՝ Աշոտը: Ահա ինչ է գրում Հր. Ասատուրը. «Լեզուներու մասին առաջինն է իր դասարանին, սակայն թվաբանության մեջ տկար է: Օր մը կ'առաջարկվի իրեն կոտորակի խրթին խնդիր մը, գոր Պարոնյան չի հաջողիր լուծել. կը նեղանա, կը բարկանա և, օգուտ քաղելով ուսուցչին գրադված մեկ վայրկյանեն, կը գրե տախտակին վրա. «Հրաժարի՞մք ի դիւրաբանութեն և յամենայն չար կոտորակաց նորա»: Ու կ'երթա տեղը կը նստի: Բոլոր աշակերտները կ'սկսին խնդալ: Դասատուն կը տեսնե գրվածը, ու Պարոնյան չարաչար կը պատժվի **Ֆայախանով**: Կերևա թե այս **Ֆայախանի** հարվածները շատ օգտակար կ'ըլլան, որովհետև ետքը, գործի աշխարհին մեջ, սրամիտ երգիծաբանը մեծ բարեկամ մը կը դառնա թվանշաններու, և նույն իսկ տոմարակալի համբավ մը կը շինե ինքզինքին իբր վաճառականի գրագիր, ու տոմարակալության դասատու կ'ընտրվի Ղալաթի Կեդրոնական վարժարանին»⁹: Ի դեպ, 1890 թ. Կեդրոնական վարժարանի ուսուցիչ Պարոնյանը հաշվապահություն է դասավանդել Հր. Աճառյանին, և վերջինս էլ հետագայում ուշագրավ հուշ է գրել այդ առիթով. «Առանձնապես պետք է հիշեն **հաշվապահության** առարկան, որի ուսուցիչն էր հոչակավոր երգիծաբան Հակոբ Պարոնյանը:

Մենք Պարոնյանին չէինք ճանաչում և նայում էինք նրան իբրև սոսկական մարդու կամ ուսուցչի վրա: Բարձր հասակով, երկարավիզ, հեղինակական թքով մի մարդ էր: Չափազանց լուրջ և ուղղամիտ: Բացի հաշվապահական գիտելիքներից ուրիշ ոչ մի նյութի մասին խոսք չուներ իր բերանում. այնքան էր լուրջ, որ նույնիսկ ծիծաղելի մի երևույթի առաջ նա ժպիտ չուներ: Այնուամենայնիվ շատ բարի մարդ էր. ոչ մի աշակերտի պակաս թվանշան տալ չգիտեր: Երբ աշակերտը բոլորովին տգետ լիներ և դասից ոչինչ չիմանար, իբր թե բարկացած, «Առ քեզի 6 մը» ասելով՝ տեղն էր ուղարկում: 6 թվանշանը համապատասխանում էր մեր այժմվա 3-ին, այսինքն՝ ընդունելի նվազագույն թիվն էր: Թվանշանները գրելիս ոչ թե վերևից ներքև էր իջեցնում, այլ ներքևից վերև էր բարձրացնում»¹⁰: Հր. Աճառյանի թողած հուշը հետաքրքրական է նաև այն առումով, որ այն վերաբերում է Պարոնյանի կյանքի վերջին ամիսներին, երբ արդեն տկար էր երգիծաբանը, հուսահատ ու նյարդային: Հր. Աճառյանը պատմում է, որ 1890 թ. դեկտեմբերին Կեդրոնական վարժարանի սաները կիսամյա քննություն ունեին, և Պարոնյանը գրատախտակի վրա գրում է մի քանի հաշվապահական գործողություններ, որոնք դժվար էին և պահանջում էին կենտրոնացում: Ուսուցիչը հանկարծ նկատում է, որ հեռվում նստած աշակերտներից մեկը թելադրում է ընկերոջը, և շատ է վրոդվում ու վիրավորվում:

«Սկսեց խոսել մի երկար ճառ,- գրում է Հր. Աճառյանը,- որից հիշում են հետևյալ վերջին բառերը. «Ով որ իր ընկերոջ քովեն կըսե, անոր տունը կըքանդե, անոր կործանման պատճառ կըլլա: Ե՛հ, ես երթամ կոր, կեցե՛ք բարով», - ասաց և դասարանից դուրս եկավ մեզ մենակ թողնելով: Այլևս չերևաց Պարոնյանը. գնաց տուն, հիվանդացավ և վեց ամիս պառկելուց հետո մեռավ»¹¹:

Այսպես, ահա, 47-ամյա հանճարեղ երգիծաբանը, որն արդեն երկնել էր իր բոլոր երկերը, ընտանիքի գոյությունը պահպանելու համար մերթ այս կամ այն գրասենյակում կամ մասնավոր անձի մոտ հաշվեմատյաններ էր կարգի բերում, մերթ էլ վարժարանում հաշվապահություն դասավանդում:

«Պոլիսը թույլ տված էր, որ մեծ էտիրնեցին անոթի ապրի: Պոլտ հայությունը անոթութենն մեռցուց գայն»¹², - ցավով նկատում է Հրաչ Զարդարյանը: Հիշենք հենց երգիծաբանի՝ դեռ 1873 թ. հուլիսի 7-ին «Մեղվում» տպագրած «Երեկ հողարկավորության հանդես մը...» առաջնորդողը, որը բանասիրության մեջ հայտնի է «Ողբ» անունով: Միջբայել Կյուրճյանն այն անվանում է «աղեխարշ դամբանական մը», ուր «գրագետին դառնությունը երկարատեն զսպված, կը պոռթկա անօրինակ ուժգնությամբ»¹³: Սա մեծ երգիծաբանի և ընդհանրապես հայ մտավորականի կյանքի դժվար պահերից՝ «մեղ օրերից մեկի» ցնցող նկարագրու-

⁹ Հր. Ասատուր, Դիմաստվերներ, Կ. Պոլիս, 1921, էջ 169:

¹⁰ Հր. Աճառյան, Կյանքիս հուշերից, Երևան, 1967, էջ 75-76:

¹¹ Նույն տեղում, էջ 76:

¹² «Զարթոնք», Բեյրութ, 1962, թիվ 161:

¹³ «Զարթոնք», 1964, թիվ 53:

թյունն է. գրողը ցավով պատմում է, որ «Մեղվի» չվաճառված համարները, ինչպես ինքն է ասում՝ իր «գավկները», ստիպված քաշով ծախում է նպարավաճառին՝ գոյությունը պահպանելու համար: Հանճարին ուղեկցող մշտական գրկանքները նկատել են նաև ժամանակակիցները, հասկացել, որ երգիծաբանը ծիծաղում է... արցունքների միջից: «Ի՞նչ նեղ օրեր ունեցավ չլատիչ հուսախաբությամբ, ապրուստի անբավարար միջոցներու ստեղծած տվայտանքի հետ, որոնց մեջ հուսավորիպածի, պարտվածի իր գոհմությունը կը թարգմանվեր ծիծաղաշարժ սրամտության կայծակներովը:

Անգամ մը երբ՝ գրական ասպարեզին ապերախտութեննն վիատած, գրագրի պաշտոն մը ձեռք բերած էր վաճառականի մը քով, երկու-երեք օր վերջը կըսեր իր բարեկամներուն՝ «բնական տանս տերը, հացագործը, մսավաճառը և նպարավաճառը՝ խոսք մեկ ընելով՝ ինձի գործ մը գտան հանճարարելով և պայման ղնելով որ շահածս ամբողջ, առանց փարա մը վար ղնելու, իրենց տանին»:¹⁴ Ի՞նչ դառն հեզություն, ի՞նչ մահու չափ սառնացուրտ հուսահատություն կար այս ծաղրաշարժ բառերուն մեջը, որոնք կը պատմեին իր շահածին ծայրահեղ չափավորությունը»¹⁵, - պատմում է Հովի. Մեթյանը:

Պարոնյանի նյութական դժվար կացությունն զգացել են նաև նրա մանկահասակ գավակները՝ Աշոտն ու Ջապելը: «1891 թ. 8 տարեկան էի, երբ կորսնցուցի հայրս, - պատմում է Աշոտը, - Օրթագյուղ կը բնակեինք: Թարգմանչաց ազգ. վարժարան հաճախելն առաջ, դեռ շատ փոքր, հաճախ իրեն կընկերակցեի: Չեղքես բռնած մինչև գրասենյակ կը տաներ գիս: Օր մը, նույն ատեն իբր սուլիչ ծառայող փոքր գավազանս, գոր նոր տված էր ինձի, շոգենավ անցքի պահուն ծովը ինկավ: Սկսա լալ: Տխրությունս մեծ էր: Այնպես կը կարծեի, թե անդարմանելի վնաս մը պատճառած են հայրիկիս:

- Հոգ մ'ըներ, ըսավ խնդալով, - ուրիշ մը կ'առնեն»¹⁶:

Երեխան մանկան բնագրով զգում է հոր նյութական անձուկ վիճակը, որը տարիներ հետո նրա մտապատկերում հստակվում է իրեն ևս անդարմանելի ցավ պատճառելով: «Իրիկուն մը, - շարունակում է Պարոնյանի որդին, - գրասենյակեն կամուրջ կուզայինք: Իր սովորական զվարթությունը կորսնցուցած էր այդ օրը: Լուռ կը քալեինք: Պահ մը նկատեցի, որ արցունքներ կան հորս աչքերուն մեջ: Թաշկինակով ատեն ատեն կը սրբեր:

- Հայրիկ, ինչու՞ կուլաս, հարցուցի:

- Ոչի՞նչ, գավակս, աչքս փոշի գնաց ու ջրոտեցավ:

Տարիներ վերջ միայն կը հասկնայի թե իր վշտին միակ պատճառը նյութական անձուկությունն էր, որուն մատնված էր և շատ հավանաբար իմ մանկական հոգիս ալ ընթատացնող այդ հուզիչ տեսարանը կը զուգադիպեր «Խիկար»ի դադարման անհույս օրերուն»¹⁶:

Նրանց ընտանիքն ապրում էր վարձու բնակարաններում, իսկ դա շատ ծանր էր նրստում երգիծաբանի վրա: Նա ամբողջ կյանքում երազում էր փոքրիկ մի տուն գնել և այդպիսով ազատվել վարձավճարից: Ահա ինչ է գրում Պարոնյանը քրոջ որդուն՝ Մաքսուտին 1887 թ. նոյեմբերի 21-ին ուղղված նամակում. «Քանի մ'օր առաջ Մեարիֆեն հրաման խնդրեցի «Պաղտասար Աղբար»ին ներկայացման համար՝ Բերա: Տեսնենք, եթե հաջողենք, կը հուսամ գումար մը ձեռք բերիլ, որով պզտիկ տուն մ'առնելու միտք ունիմ. 50-60 ոսկվո տուններ կը վաճառվին հոս երեք սենյակով. որովհետև տան վարձքը ծանր կուզա կոր»¹⁷: Եվ միայն իր վախճանից մեկ-երկու տարի առաջ նրան հաջողվեց գնել մի փոքրիկ տուն Օրթագյուղում՝ հրեական գերեզմանատների մոտ՝ այն էլ ինչ-որ փոխատվության շնորհիվ. «Իր վախճանեն մեկ երկու տարի առաջ իր գործատիրոջ իրեն ըրած մեկ փոխատվության շնորհիվ Օրթաքեռյ, մեր հրեից գերեզմանատուններուն մոտ շատ փոքրիկ տուն մը գնել կրցավ, չեն գիտեր թե ի՞նչ գնովը և թե այս անգամ ալ զինքը չխաբեցին...»¹⁸:

Հայ գրականության թերևս ամենասրամիտ ու ամենահամարձակ գրողը՝ «հայ կյանքին և հայ բարոյականին վրա հսկող անաչառ դատավորը» (Մ. Ծանաշյանի բնորոշումն է),

¹⁴ «Ծաղիկ», 1891, թիվ 31:

¹⁵ Թ. Ազատյան, Հակոբ Պարոնյանի կյանքն անտիպ ղրվագներ (Պատմված՝ իր գավկին՝ Աշոտ Հ. Պարոնյանի կողմն), «Մշակույթ» ազգագրական տարեգիրք», Ա տարի - 1948, Իսթանպուլ, 1947, էջ 93:

¹⁶ Նույն տեղում, էջ 94:

¹⁷ Գ.Ա.Թ., Հ. Պարոնյանի փոնդ:

¹⁸ Հովի. Մեթյան, Հ. Պարոնյանի մի քանի հատկանշական կողմերը, Վ. Զաքարյան, Հիշատակարան (1512-1933), Ե հատոր, Գահիրե, 1939, էջ 43-44:

որի աչքից չէր վրիպում 19-րդ դարի երկրորդ կեսի մեր իրականության մեջ տեղ գտած գրեթե ամեն մի արատավոր երևույթ՝ լինելով դա քաղաքական թե սոցիալական, կենցաղային թե բարոյական, և որի երգիծանքի սլաքներից սարսափում էին հայ ազգային երևելիները, գարմանալի անպաշտպան էր, դյուրահավատ ու մանկան պես միամիտ: Ահա ինչ է պատմում Հովհ. Սեթյանը. «...այնչափ քիչ գործի մարդ էր որ՝ խիստ շատ անգամ՝ իրեն որևէ բան ծախող մարդիկ զինքը կը խաբեին՝ կամ անհավատալի կերպով բարձր գին մը վճարելու տալով իրեն, կամ՝ ավրված կամ՝ չալտնու ապրանք մը քշելով: «Ախպար, կ'ըսեր, կարծես թե ճակդիս վրա գրված է և կը կարդան կոր ի՞նչ միամիտ ըլլալս»¹⁹: Մ. Մամուրյանը, 1892 թ. Հր. Ասատուրին ուղղված նամակում հատուկ շեշտելով Պարոնյան մարդու բարոյական բարձր կեցվածքն ու նրա երգիծանքի ներգործուն ու հավերժական ուժը, այն, որ «Պարոնյան միշտ պիտի փայլի. իր սեռին մեջ, իբրև բնիկ հայացի հանճար՝ թե՛ իմացական սուր կարողությամբ, թե՛ երգիծաբանական բեղուն հատկությամբ և թե՛ լեզվական ընտիր, վճիտ բացատրությամբ»²⁰, անդրադառնում է նաև նրա գուսպ, անշահասեր բնավորությանը. «Փորձառու և զիտակ աշխարհային իրերու և հմուտ պատմության ու գրականության, անձեռնհաս էր իր անճանական գործերու մեջ՝ ինչպես են անոնք որ գաղափարներու աշխարհը կ'ապրին»²¹:

Եվ այս հանճարեղ գրողը, որն օժտված է եղել պայթուցիկ ծիծաղ առաջացնելու հազվագյուտ ծիրքով, իրական կյանքում եղել է զարմանալի թախծոտ ու մելամաղձիկ: Սիրել է արևելյան տխուր մեղեդիներ ու ինքն էլ երբեմն նվագել քանոնի վրա, սիրել է հասարակ մարդկանց, հաճախ գրուցել նրանց հետ պանդոկներում ու փողոցներում՝ առանց ծանձրանալու, սիրել է նաև խմիչքը՝ օղին և հատկապես գինին. «Պարոնյան մենասեր, սակավախոս և քիչ մը կակազող էր: Հավաքություններու մեջ կը սիրեր սետիքին վրա ընկողմանիլ, ու այդ դիրքով դիտել ու խոսկալ: Իսկ ցորեկները կը նախընտրեր հաճախել Թահթազալեի ամենահին կապելանները. հրեական կեթոյին այդ ժխորալիք եռուզեռին մեջ է, որ ան ինքզինքը առանճացած կ'զգար, ու կ'որոճար օղիի աժանագին շիշին առջև, իր այնքան թանկագին զուլսգործոցները»²², - պատմում է կենսագիրը:

Այն, որ Հակոբ Պարոնյանը միշտ եղել է կյանքի կենտրոնում, իրականությունից ստացել կենսական հզոր լիցքեր, շփվել տարրեր խավերի մարդկանց հետ, և որտեղից էլ ծնվել է նրա երգիծանքի բնականությունը, նկատել է նաև որդին՝ Աշոտ Պարոնյանը. «Ուրիշ օր մը, երբ մեր տան փողոցն դեպի նավամատույց կ'երթայինք դարձյալ, ճամբան լինոն ծախող հրեայի մը հանդիպեցավ և սկսավ խոսիլ հետը: Վայրկյանները կը սահեին ու չէր վերջանար անոնց տեսակցությունը: Այդքան երկար ի՞նչ կրնար խոսիլ հայրս փողոցի վաճառորդի մը հետ: Համբերությունս կը հատներ, սրտմեղիլ, ջղայնամալ սկսա ու վերջապես ընդմիջեցի, փեշեն քաշելով:

- Հայրիկ, շոգենավը պիտի փախցնենք:

Ու քալել սկսանք: Փողոցին ծայրը չհասած, կրոնավոր մը ելավ դեմը: Չէի գիտեր և այսօր ալ չեմ հիշեր թե ո՞վ էր այդ եկեղեցականը: Այս անգամ ալ անոր հետ խոսքի բռնվեցավ: Սակայն չունեցա նույն ջղայնությունը: Վերջապես հայ կրոնավոր մըն է և խոսելիք բան մը կրնային ունենալ, կը խորհեի»²³:

Որդին հորը ջերմորեն է հիշում կենցաղում, մտերիմների շրջանում, և հուշապատման մեջ աստիճանաբար բարձրանում է Պարոնյան ամուսինը, հայրը և մարդը. «Իրիկուններն ընդհանրապես ուշ կուգար տուն հայրս: Տունեն ներս կը մտներ շեն ու զվարթ: Իր խմած ըլլալը գաղտնիք չէր մեզի համար: Առաջին գործը կ'ըլլար հարցուփորձել մայրիկս, թե ես ու քույրս խելոք կեցա՞ծ էինք:

...Ճաշասեղանը շուտով պատրաստ կ'ըլլար հորս սիրած աղանդերներով և զինով կամ օղիով: Իր և մայրիկիս մեջտեղը կը նստեի միշտ: Կը զվարթաբաներ ու կը կատակեր մեզի հետ: Երբեմն ես ալ մասնակից կ'ըլլայի իր զինարբուլին: Կը դառնար մորս:

- Սաթենիկ, տղուն ալ քիչ մը զինի լեցուր:

- Հակոբջան, տղուն ճիւղները պիտի այրին:

¹⁹ Նույն տեղում, էջ 44:

²⁰ «Արևմուտք», 1945, թիվ 37:

²¹ Նույն տեղում:

²² Հ. Աղասյան, Աղբիւսանալուտ հայ գաղութը, Բլովտիվ, 1935, էջ 133:

²³ Թ. Ազատյան, Հակոբ Պարոնյանի կյանքն անտիպ դրվագներ..., էջ 93:

- Այդքան պզտիկ քանակությամբ ի՞նչ կ'ըլլա. թող խմն որ մա'րդ ըլլա, մա'րդ:

Ճաշեն վերջ երբ կարդար կամ գրեր, մենք պառկած կ'ըլլայինք: Նստած ատեննիս ալ չէինք խանգարեր իր աշխատությունը:

Ինչպես եկեղեցական մույնպես արևելյան երաժշտության ջերմ սիրահար մըն էր հայրս: Ուներ **գառնոն** մը գոր կը նվագեր երբեմն»²⁴:

Նա էլ հայր էր, ինչպես աշխարհի մյուս բոլոր հայրերը, ջերմանում էր իր ընտանիքում, գուրգուրում կնոջն ու զավակներին. «Տարի մը, երբ դեռ շատ փոքր էի, Սարըլյար օդափոխության գացինք: Բարձր դիրքի վրա էր մեր ամարանոցը: Չիս կառքին մեջ կը դնեի ու կը պտտեցնեի: Ատտու մը, լավ կը հիշեմ, մակույկի մը մեջ ըրինք մեր նախաճաշը: Մայրս միասին բերած էր նաև սուրճի եփոցը: Կը սիրեր նաև ծովու լոգանքը: Ծերմակ արևարգել մը անցուցած գլուխը և զիս ալ գիրկը առնելով կը լողար»²⁵:

Աշոտ Պարոնյանի հիշողության մեջ ահա այսպես աղոտ մնացել են հանճարեղ հոր կյանքի որոշ դրվագները, նաև այն, որ նա, հաճախ դառնանալով անողորք կյանքի հարվածներից, նյութական սուղ վիճակից ու մարդկային արատավոր հարաբերություններից, իր վիշտը փորձել է խեղդել խմիչքի մեջ:

Պարոնյանը, սակայն, շրջապատված է եղել նաև հոգատար մարդկանցով, որոնք զիտակցել են իրենց՝ նրա ժամանակակիցը լինելու երջանկությունը և հոգ տարել երգիծաբանի կյանքի անվտանգության համար: Դրանցից մեկն է եղել Ս. Փրկիչ Հիվանդանոցի գրասենյակի տեսուչ Գամիկ Հյունքյարպեյենտյանը, որի մոտ որպես համարակալ աշխատել է Պարոնյանը:

Վերջինս, նկատելով երգիծաբանի անվերջ «կոնձաբանությունը» և անհանգստանալով նրա առողջության կամ որևէ արկածի հանդիպելու վտանգի համար, պաշտոնակիցներից մեկին՝ Պողոս Վարժապետյանին, հանձնարարում է գաղտնաբար հետևել Պարոնյանին և անվտանգ տուն ուղեկցել: Եվ դա՝ ամեն օր. «Գամիկ Հյունքյարպեյենտյան, որ հորս պաշտոնավարության շրջանին տեսուչն էր Հիվանդանոցի Գրասենյակին, մասնավոր պաշտոն կուտա Տոքթ. Պ. Վարժապետյանին՝ հետևելու Պարոնյանին մինչև Օրթագյուղ: Հանձնարարված էր իրեն, առանց հայտնի ընելու, մուտք գործել այն կապելաներեն ներս, ուր կը խմեր մեծ երգիծաբանը:

...Շատ չանցած, Պարոնյան կը նշմարե իր պաշտոնակիցը և ուրախությամբ կը ձայնե.

- Ծո՛, Պողոս, հոս ի՞նչ գործ ունիս:

- Ինչու՞ կը գարմանաս, ամեն մարդ կրնա հաճախել և ե՞ս իրավունք չունիմ գալու հոս, կը պատասխանե Վարժապետյան:

...Այս հանդիպումը երբ նույն ձևով կը կրկնվի, այն ատեն կը հասկնա Պարոնյան, թե ի՞նչ իմաստ ունի այդ ընկերակցությունը»²⁶:

Երգիծաբանն ունեցել է ընկերների լայն շրջանակ. դրանք մտավորականներ էին, որոնց հետ նա քննարկում էր արվեստի ու գրականության խնդիրներ: Ինչպես վկայում է Հր. Ասատուրը, Պարոնյանը նրանց հետ հաճախ նստում էր պանդոկներում՝ օդու սեղանի շուրջ, և անվերջ զրուցում: Այսօր մեզ հայտնի են նրա սրտակից ընկերներից մի քանիսի անունները՝ Անտոն Ամպերյան, երաժիշտ Սկրտիչ Էմիլյան, տպագրիչ Եղիա Տնտեսյան, դերասան Թրյանց, «Թատրոն» երգիծաթերթի աշխատակից Գասպար Չերազ, գրականագետ, լեզուների գիտակ Մաքսուտ Սանտալճյան... «Հավանորեն օրվան խնդիրները իրենց խոսակցությանց նյութ կ'ըլլային, և ատոնցմե կը ներշնչվեր հաճախ **Թատրոնի** խմբագիրը: Մտացի մթնոլորտը որ կը շրջապատեր զինքը հզոր խթան մըն էր իր ուղեղին համար, և գրելու առատ նյութ կը հայթայթեր իրեն»²⁷, - գրում է Հր. Ասատուրը:

Բազմազբաղ երգիծաբանը գրում էր արագ, բայց չափազանց կենտրոնացած, գրում էր հիմնականում գիշերները, երբեմն էլ՝ աշխատավայրում: Մ. Սանտալճյանը հիշում է, որ 1884 թ. կեսերին Պարոնյանը Ադրիանապոլսի Ռեժիի ծխախոտի գործարանում գանձապահ աշխատելու շրջանում է գրել «Պաղտասար աղբար» կոմեդիան ու լրացրել «Խիկարի» էջերը՝

²⁴ Նույն տեղում, էջ 95:

²⁵ Նույն տեղում: էջ 97:

²⁶ Նույն տեղում, էջ 96-97:

²⁷ Հր. Ասատուր, Դիմաստվերներ, էջ 188:

հենց գործարանում. «...այդ միջոցին Պարոնյան թե՛ յուր պաշտոնով կ'զբաղեր և թե՛ «Խիկար»ի կ'աշխատեր հաճախ պարապո ժամերուն՝ Ռեժիի մեջ յուր գրասեղանին վրա, ուր գրած է ըսած են արդեն - «Պաղտասար Աղբար»ի մեկ մեծ մասը: Երեկոները գրեթե միշտ ի միասին էինք, ինչպես նաև բոլոր օր, քանի որ ես ալ պաշտոն ունեի Ռեժիի մեջ: Գրականության վրա կը խոսակցեինք, կամ «գանոն» կը չալեինք»²⁸:

Պարոնյանի քրոջ որդին հիշում է նաև, որ երգիծաբանը հատկապես հմուտ էր ֆրանսերենին, գիտեր նաև հունարեն, իտալերեն, թուրքերեն, իսկ անգլերենից հայերեն էր սկսել քարգմանել ընդհանուր պատմության ինչ-որ ձեռնարկ:

Միշտ նախընտրել է դասական գրականությունը, հին շրջանի հեղինակների երկերի մեջ տեսել ճշմարիտ գեղեցկությունները և ինքն էլ ներշնչվել նրանցից: Կարողալով Ալֆոնս Զարի (1808-1890) «Պիժակներ» ժողովածուն՝ բացականչել է. «Յաման բան է այս մարդը»²⁹ և այդ գրքույկների արտաքին մնանողությամբ գրել իր քաղաքական քրոնիկները: Հավանել է Լարոշֆուկոյի աֆորիզմները, Պլուտարքոսի «Չուգակշիռները», իսկ Շեքսպիրը եղել է նրա պաշտամունքը. «Շեքսպիր՝ իմաստասիրաց և քերթողաց մեծագույնն էր իրեն համար»:

Եվ մի ուշագրավ բան. խստահայաց, նույնիսկ քմահաճ արվեստագետը, որն իր գրական ողջ գործունեության ընթացքում պաշտպանել է ռեալիզմի դատը և գլուխգործոց երկերի առաջաբաններում («Ազգային ջոջեր», «Մեծապատիվ մուրացկաններ») կամ առանձին հողվածներում ընդգծել իր դավանած գեղարվեստական մեթոդի առավելությունը, հաճախ երգիծել նատուրալիստներին ու ռոմանտիկներին (օրինակ՝ «Շերենցն տակավին Մանուկենց է անձեռ ստեղծելու արհեստին մեջ»), կարող էր հանկարծ արտասվել՝ կարողալով Ա. Դյումա որդու «Կամելիազարդ տիկինը» վեպը. «Երբ բնապաշտական դպրոցին վրա կը խոսակցեինք օր մը, ըսավ ինձ. - «La Dame aux camélias ի՞նչ կը կարծիս որ ըլլա. այն ալ բնապաշտական վեպ մ'է. բայց որքա՞ն կը տարբերի մյուս վեպերեն. լացած են այդ վեպը կարողալով»³⁰: Մեծ արվեստագետին այստեղ, անշուշտ, ամենից առաջ գրավել է այդ վեպի հոգին, և նա նշանակություն չի տվել հյուսվածքի գեղարվեստական մեթոդին: Դեռ «Ազգային ջոջեր» երգիծական դիմանկարների շարքում («Խաչատուր Միսաքյան») Պարոնյանն առաջ էր քաշել գրական միջակությունների, հանգապաշտ ապաշնորհների ու հանճարների տարբերակման խնդիրը, գտել, որ արվեստի իսկական երկերն անմահ են, իսկ հանճարը ո՛չ ազգություն ունի, ո՛չ էլ կրոն, քանի որ «Հանճարի ծնունդ եղող բանաստեղծություն մը լավ ընդունելություն կը գտնե Անգոլիայեն, որչափ ալ անոր հեղինակը սլավ ըլլա»:

Կյանքի վերջին ամիսներին հանճարեղ երգիծաբանը ուժասպառ էր, հուսաբեկ: Դուրյանական «երկնքի հիվանդությունը» թոքախտը, օր օրի ավերում էր երգիծաբանի մարմինը, զգում անհուսության գիրկը: Մ. Սանտալճյանն այն կարծիքն է հայտնում, որ Պարոնյանը հավանաբար վարակվել էր գորանչից՝ Ազապի Էթմեքճյանից. «Հիմակ, գաղտնիք մ'ըսիմ ձեզ գոր թերևս գիտեք. Պարոնյանի գորանչը թոքախտն էր տառապեք, և շատ հավանական է, որ այս հիվանդությունը փոխանցած ըլլա Պարոնյանի վրա, որ զգուշություն չէր ըներ բնավ, յուր գորանչին կասկած չտալու համար յուր հիվանդության վրա: Այսպես կը կարծեն. ստույգ չեն գիտեր»³¹: Հնարավոր է, քանի որ Պարոնյանի մահից երկու տարի հետո դարձյալ թոքախտից վախճանվում է կինը: Ուրեմն՝ վարակը կատարել է իր ավերիչ գործը: Բայց այստեղ էականը, թերևս, այլ խնդիրն է՝ Սանտալճյանի նամակում տեղ գտած նախադասությունը, թե Պարոնյանը միտումնավոր անփութություն է ցուցաբերել գորանչի հիվանդության նկատմամբ, որպեսզի դատապարտված կինը չզգա իր վիճակի անհուսալիությունը... Ինչու՞: Այստեղ կարելի է միայն կոահուսներ կատարել: Հիշենք, որ 1873 թվականից 30-ամյա Պարոնյանը տարիներ շարունակ որպես կենվոր բնակվում էր Էթմեքճյանների հարկի տակ՝ հենու իր ազգակիցներից, նաև՝ մորից՝ Բենմայե հանըմից, որին սիրում էր անսահման սիրով, և զուցե տանտիրուհին՝ Ազապին, իր հոգատարությամբ փոխարինել է Պարոնյանի՝ Աղդիանապոլսում բնակվող մորը: Բայց այդ ամենին գումարվում է նաև մեծ հոգիներին հատուկ

²⁸ Մ. Սանտալճյանի՝ Ա. Պոլխ, 24/6 դեկտեմբեր, 1891 թվագրված նամակը Հր. Ասատուրին, ԳԱՄ, Հ. Պարոնյանի ֆոնդ:

²⁹ Նույն տեղում, Ա. Պոլխ, 3/15 հուլիս, 1891 նամակը:

³⁰ Նույն տեղում:

³¹ Նույն տեղում, 5/17 դեկտեմբեր:

բնավորության մի ուրիշ գիծ՝ անանձնակառությունը, որով միշտ փայլել է հանճարեղ երգի-
ծաբանը, որը ցավն իրեն է պահել և ծիծաղի ուրախությունն ու երջանկությունը շոալորեն
ցրել մարդկանց...

Պարոնյանը չէր վախենում մահից. նա գիտեր, որ «ապագա սերունդը պիտի անմա-
հացնե» իր անունը, որ իր մասին «դեռ կ'խոսեն, կ'պատմեն...»: Եվ զարմանալի չի թվում
մտերիմ ընկերներից մեկին՝ Հովի. Սեթյանին, արդեն հիվանդ գրողի հաղորդած մարգարեա-
կան գուշակությունը իր մահվան մասին՝ ասված բավական զվարթ տոնով, ծիծաղով. «Առա-
ջին անգամ երբ այցելեցի իրեն այդ տունը, - կարծես զինքը տանող ախտին սերմերը արդեն
սկսած էին գոյանալ իր կուրծքին տակ - իր մանկամարդ կնոջ ներկայությամբ, որ դառնա-
ղետ կը ժպտեր, ցուցուց ինձի փոքրիկ սենյակ մը որուն մեկ կողմը կ'երկնմար սատր մը:
«Այս սատրին վրա, ըսավ, ամիսներով հիվանդ պիտի պառկյիմ, աչքս հորիզոնին գամած, ու՝
հոս պիտի մեռնիմ»: Եվ ասոնք ըսած ատենը կը խնդար, իբրև թե զվարթ բանի մը վրա եղած
ըլլար խնդիրը:

Ճիշտ այսպես ալ եղավ, բառ առ բառ»³²:

Իսկ մինչ այդ մահճին գամված երգիծաբանին այցելում էին շատերը՝ մտավորական-
ներ ու աշակերտներ, հոգևորականներ ու ազգային գործիչներ, հասարակ մարդիկ... Կազ-
մակերպվում էին հանգամանակություններ, որին օժանդակում էր հայ մամուլի առաջադեմ թևը:
Այդ առիթով չափազանց ազդեցիկ հուշ է թողել Հր. Աճառյանը. «Իր հիվանդության ժամա-
նակ ընդհանուր ազգային հանգամանակություն տեղի ունեցավ: Իրեն հետ միաժամանակ հի-
վանդացել էր նշանավոր դերասան Պետրոս Աղամյանը: Երկու միջնակարգ դպրոց, մին մեր
Կեղրոնական վարժարանը և մյուսը՝ Սվյոտարի Պերպերյան վարժարանը (վերջինում սո-
վորում էին գերազանցապես հարուստների երեխաները. - Ալ. Մ.) մրցման մեջ էինք մտել: Օ-
րապահիկից կտրելով, բոլոր աշակերտներս կոպեկներ էինք հավաքում և շաբաթական մի
անգամ հավաքած գումարը հանճումս մեր դպրոցի տեսուչ Մոստիշյանին: Նա միշտ գալիս
էր մեր դասարանը և հիշեցնելով, թե Պերպերյանի աշակերտները այսքան գումար են հա-
վաքել, մեզ գրգռում էր: Ես իմ հորից ստանում էի օրական 8 կոպեկ, որից 4 կոպեկը կամուր-
ջից անցնելու համար, 2 կոպեկ 1/4 կիլո հացի զին և 2 կոպեկ էլ պանիր կամ խաղող: Ես չէի
մասնակցում Աղամյանի հանգամանակությամբ, ասելով, թե հարուստների զվարճության հա-
մար խաղացել է, թող հարուստներն էլ օգնեն: **Սակայն Պարոնյանի համար երբեմն կամուր-
ջից խորամանկությամբ փախչելով, երբեմն էլ օրապահիկից զրկելով ինձ, խնայած կոպեկ-
ներս տալիս էի հանգամանակության»**³³: Հուշի այս բեկորը, ինչպես տեսնում ենք, շատ խոսուն
է. ծայր էր առել մեռնող երգիծաբանի անմահության ճանապարհը...

47-ամյա երգիծաբանի մահվանից հետո ավելի է ծանրանում նրա երեխաների և Մա-
թենիկի վիճակը: Ամուսնու մահից երկու տարի հետո՝ 1893 թ. փետրվարին, վախճանվում է
նաև այրին: Այդ մասին դարձյալ հուզիչ հուշ է թողել Ս. Արփիարյանը՝ պատմելով Պարոն-
յանի այրու անշուք հուղարկավորության մասին:

Հոգեվարքի մեջ գտնվող մոր մոտ եղել են միայն նրա երկու փոքրիկ որբերը. «Աշոտ
մինչև առավոտ հսկած էր մորը սնարին թով, ութնամյա քրոջը՝ Չապելին հետ: Հեզ տիկին
Սաթենիկ, զգալով իր մահամերձ վիճակը, հորը արցունք թափեր է զավակներուն հետ զիր-
կընդխառն, օրհներ է բոլոր այն ազգայինները, մերժավոր թե հեռավոր, որք իր հիվանդու-
թյանը միջոցին շթողուցին որ բան մը պակսի իրեն՝ նյութական նպաստներով, և օրհներ է
զանոցք որք զրգիտ եղան այդ հանգամանակության: Առավոտյան ժամ երեքին ավանդեր է հո-
գին: Իր վերջին մտածումն եղել է երկու որբերուն ապագան»³⁴:

Ինչպես տեսնում ենք, այնուամենայնիվ, եղել են հանգամանակություններ, նյութական օ-
ժանդակություններ: Բայց Պոլիսը վատ հիշողություն ունի. Պարոնյանի այրու հուղարկավո-
րությանը, ինչպես դառնացած հիշում է Ս. Արփիարյանը, մասնակցում են «գրագիտաց դա-
սեն՝ Հակոբ է.Ֆ. Գուրգեն և Հարություն է.Ֆ. Ալփիար, երկու երեք ալ վարժապետ: Պսակ՝
բնավ»:

³² Հովի. Սեթյան, Հ. Պարոնյանի մեկ քանի հատկանշական կողմերը, էջ 44:

³³ Հր. Աճառյան, Կյանքիս հուշերից, էջ 76-77:

³⁴ Ս. Արփիարյան, «Չորս տերտերով», «Արևելք», Կ. Պոլիս, 1893, 22 փետրվարի:

Ոչ միայն Տ. Արփիարյանի, այլև ժամանակակիցների թողած տեղեկություններից երևում է, որ Սաթենիկը եղել է Պարոնյանին արժանի կին՝ բարի, հեզ ու պատկառելի, նաև՝ շատ գեղեցիկ... Եվ հավանաբար դրանից է, որ Տ. Արփիարյանի հուշ-մահախոսականը տեղ-տեղ ստանում է քնարական երանգներ, դառնում կարծես մի շատ տխուր բանաստեղծություն. Պարոնյանի անդրանիկ զավակը, փետրվարյան ցրտին առանց վերարկուի, գըլխաբաց, «աչքերն արցունքեն ուռած ու կարմրած, հեծեծելով», «ծերուկ ազգականի մը ձեռքեն բռնած», հետևում է մոր դագաղին, իսկ դուստրը՝ Չապելը, «տան մը պատուհանեն, մանրիկ ձեռները զալարելով, ու երեսն ապակիին փակցուցած, «մայրիկ, մայրիկ» կը պոռար լալազին»։ հուղարկավորներն անցնում են այն ձորով, «որուն եզրը կը բարձրանար երբեմն Պարոնյանին ու Սաթենիկին սիրո օրորանն եղող տունը»։ «Հիմա, հարթ հավասար են այն գետինն ու պարտեզը, հին տախտակաորմով մը փակված, շուրջը բարձրացող սիրուն տուններն մեջտեղ՝ փոսի երևույթ մը առած: Ծառերն միայն կը մնան, այսքան տարի ետքը նորեն բողբոջելու պատրաստվելով, ու ավելի երջանիկ քան այն խարտիշահեր աղջիկն, որ երբեմն կը խաղար իրենց շուքին տակ, և հիմա՝ ծյուրած ու անշնչացած, կ'անցնի կերթա իրենց մոտեն, առանց ազդվելու արևուն շողովն ու այգուն ցողովը»³⁵:

Իսկ աշխարհում մնում են Պարոնյանի որբերը՝ միայնակ, շփոթված ու շվարած. մեկը՝ 8, մյուսը՝ 10 տարեկան: Տ. Արփիարյանը պատմում է, որ Սաթենիկի հուղարկավորությունից հետո հանգուցյալի ազգականներից մեկն ասում է. «Վաղը Աշոտին բալթո մը առնենք»: Եվ հանկարծ կը շողան Պարոնյանի անդրանիկին աչքերը, տխուր ուրախության մը նշույլը կը նշմարվի անոնց մեջ, արդեն իսկ տաքություն մը կը զգա հեզ պզտիկը, որ կրակին քով կծկված է. ոտքի կելլե, կը հանե բուրդե սև շալը գոր վիզը փաթթած էին, ու աշխույժ քայլերով կը վերադառնա իր տեղը: Բալթո՝ մը... հնչ երազ աղքատ տղու մը համար: Ու քույրը որ ավելի լավ հազված է, հնք ալ խանդաղատանք կը նայի եղբոր երեսին և անոր ներքին գոհունակությանը կը մասնակցի վաղահաս ժպիտով մը: Մայիսի անձրևներուն ետք ծագած արեգական շող մը՝ այդ ժպիտը, որուն պիտի հաջորդեն նորեն ամպոտ երկինք»³⁶:

Հիրավի, գալիս են ավելի դժժան օրեր. պոլսահայերից և ոչ մեկը չի արձագանքում ժամանակի հայ մամուլի խնդրանքներին՝ որդեգրել և պատսպարել Պարոնյանի կարոտ ու լքված որդիներին: Մամուլը սրտահույզ տողերով է նկարագրում Աշոտ Պարոնյանի ծանր վիճակը: Մի կարճ միջոց Ռ. Պերսեյանի վարժարանում պատսպարված որբին տնօրենը, տեսնելով, որ մարմնով տկար է, ուղարկում է Ադրիանապոլիս՝ հորեղբոր՝ Սահակ Պարոնյանի մոտ: Վերջինս վաճառում է եղբոր՝ Օրթազյուղի տունը և խնամում որբերին: Սակայն նոր աղետ. վախճանվում է նաև Սահակ Պարոնյանը, և Աշոտը ստիպված վերադառնում է Կ. Պոլիս՝ իր գոյությունը պահպանելու համար: «Ու այսօր, - գրում է Գր. Համբիկյանը 1906 թ., - կրկին Պոլիս կուգա խեղճ ուսման մեջ հարվածված բաղղը գործի ասպարեզին մեջ փորձելու համար: Բայց ցավ է ըսել, որ խեղճ տղան հակառակ քանի մը ծանոթ անձնավորությանց միջնորդության, գործ մը չէ գտած, այսինքն մեկը չէ ուզած զինքը քով առնել, առարկելով թե տկարակալմ է: ...Եթե հայրը մոռցանք, երբ անոր հիշատակը և հողակույտը այսօր անհայտացած է առանց հետքի մը, երբ մարմարիոնի պարզ կտոր մը զլացանք անոր, գեթ իր զավակը, կենդանի Պարոնյանը չլքենք, և չստիպենք, որ խեղճը կրկին Էտիրեն վերադառնա խեղճության ճիվաղին ճանկերուն տակ հատնելու համար»³⁷:

Բայց Պոլիսը կրկին լռում էր: Պարոնյանի որդին քրոջ հետ մի կերպ աշխատանքի է անցնում և պատսպարվում Եղի Գուլեի Ազգային հիվանդանոցում (1910 թ.): Ըստ ջահել՝ թոքախտից վախճանվում է Չապելը (1912 թ.), իսկ Աշոտը մինչև 1944 թ. վարում է նույն հիվանդանոցի դիվանապետի պաշտոնը: Նա ևս հոր պես բարի ու համեստ էր, օժտված սեփական արժանապատվության բարձր զգացումով:

Սփյուռքահայ գրական գործիչ Գուրգեն Թրենցը, որը մի միջոց պաշտոնավարել է վերը նշված հաստատությունում, հիշում է. «Աշոտ հայարտ էր իր հայրիկով: Անոր վայելած համազգային հարգանքն դեռ հովանի էր իր վրա: Բայց հնքը ոչ մեկ ատեն ուզած է անոր շուքին նստիլ իր պաշտոնին կիրառությանը մեջ թե անկե դուրս: Խրոխտ էր նկարագրով,

³⁵ Նույն տեղում:

³⁶ Նույն տեղում:

³⁷ Գր. Համբիկյան, Հակոբ Պարոնյանի զավակը կարոտ ու լքված, «Արարատ», Ս. Էջմիածին, 1906, հունիս-հուլիս, թիվ 2-Է, էջ 526:

ինչպես եղած էր հայրը: Հրանդ Ասատուր որ իր հորեմական բարեկամն էր, Պետական Խորհուրդի անդամակցության շրջանին, Աշոտին իսկ խոստովանությամբ, հաճախ կը հրավիրե եղեր զայն իր մոտ և շաքարին ու բրինձին ամենն հազվագյուտ ատենին, իր օրինական իրավունքն մաս ու բաժին կը հանն իրեն: Չէի կրնար մերժել կ'ըսեր որդի Պարոնյան, որովհետև հորեղոր գուրգուրանքը կը միացներ իր օժանդակության: ...Մայրս Հակոբճան կը կոչեր հայրս, կ'ըսեր, ու կարծես թե հոգիին խորեն լաճի պես կ'ըլլար այդ ձայնին շեշտը: Պաշտամունք ուներ հորը ստեղծագործություններուն նկատմամբ: Սրբազան ավանդի մը պես կը պահեր հորը «Շողորոր» անուն թատերգության ձեռագիրը, զոր մեծ դժվարությամբ փրկած էր Պիմեն Զարդարյանեն, նյութական գոհողությունով մը: Խորհուրդ տրվեցավ իրեն Երևանի Մատենադարանին դրկել զայն, ուր Պարոնյան իր մասնավոր անկյունը ուներ արդեն, այլպես անխուսափելի էր օր մը անոր կորսվելու վտանգը: Անսաց և այնպես ալ լրավ»³⁴:

Աշոտ Պարոնյանն ապրեց 67 տարի (վախճանվել է 1951 թ.), սակայն բացի վերը նշված «Շողորոր» կատակերգության ձեռագրից և Պարոնյանի «Թատրոն մանկանց» պատկերազարդ երկշաբաթաթերթի հավաքածուից (որոնք ուղարկվեցին Երևան) ուրիշ ոչինչ չկարողացավ փրկել ամենակուլ ժամանակի ճանկերից...

Այսպես, ահա, չիրականացավ հանճարեղ երգիծաբանի վերջին հույսը: Չիրականացավ նաև «յուր հանճարույն գլուխ գործոցն, որո հատակագիծը կազմ ու պատրաստ է արդեն», և որի համար «երկու հարյուր ոսկի կը խնդրեր երթալ աշխարհի ամենն կողմը շրջելու, ընկերային ամեն խավերն հուզելու և մտքին տիպարներ գտնելու»³⁵: Բայց իրականացավ նրա ամենամեծ մարգարեությունը՝ ինքն անմահ է ...Եվ այսօր էլ՝ նոր հազարամյակի շեմին, «մեզի օգնության կը կանչենք Պարոնյանի անմահությունը, որ ահավոր ուրվականի մը նման կը բարձրանա մեր պոստիկության վրա, կը հեզնե, կը ծաղրե, բայց չի գոհանար այդքանով, այլ մեզ կը հրավիրե մտածելու և ընտրելու ուղիղ և ճշմարիտ ճամբան»³⁶:

Ա. Ա. МАКАРЯН — Эпизоды из жизни Акопа Пароняна. — В статье при сопоставлении неизвестных или малоизвестных в литературоведении фактов вырисовывается история некоторых событий жизни и деятельности крупнейшего армянского сатирика Акопа Пароняна (1843-1891). В частности подчеркиваются высокие моральные качества Пароняна-человека, его добропорядочность по отношению к социальным, бытовым и политическим явлениям. Впервые в научный обиход вводятся подробности женитьбы писателя, складываются эпизоды жизни его жены и родных. Факты эти сохранились в воспоминаниях и письмах. При отсутствии архива А. Пароняна вызывает определенный интерес освещение неизвестных донныне фактов биографии А. Пароняна, почерпнутых со страниц армянской печати XIX в. и других печатных источников. Они могут восполнить научную биографию А. Пароняна, дорисовать его человеческий облик.

³⁴ Գ. Թրենց, Հակոբ Պարոնյանի շուրջ հուշերու պատասխաններ: «Հուշատոմի գրքույկ անմահ երգիծաբան Հակոբ Պարոնյանի», Իսթանպուլ, 1965, էջ 32-33:

³⁵ Տե՛ս Ա. Սուրենյան, Հակոբ Պարոնյան, «Ծաղիկ», 1891, թիվ 31:

³⁶ Տե՛ս Ռ. Հատտենյան, Հակոբ Պարոնյանի մտերմության մեջ, Իսթանպուլ, 1965, էջ 17: